ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ
ԹԻՎ 039/2019-Ա

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ 1-ԻՆ ԽՄԲԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«30» ապրիլի 2019թ. ք. Երևան

Ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 23-րդ հոդվածով, 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների (քննիչների) թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց մասնագիտական պատրաստման 2019թ. ուսուցման ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 28.02.2019թ. թիվ 3 որոշումը, ՀՀ քննչական կոմիտեի որակավորման հանձնաժողովի 15.04.2019թ. նիստի թիվ 19 արձանագրությունը, «Փորձաշրջանի հիմնական ղեկավար և երկու փոխարինող նշանակելու մասին» ՀՀ քննչական կոմիտեի նախագահի 18.04.2019 թ. թիվ 303-Ա հրամանը՝

Հրամայում եմ

1. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2019թ. ուսումնական տարվա՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց 1-ին խմբի բաշխումն ըստ փորձաշրջանի ղեկավարների՝ համաձայն Հավելված 1-ի:
2. Հաստատել Արդարադատության ակադեմիայի 2019թ. ուսումնական տարվա՝ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ծառայողների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձանց փորձաշրջանի անհատական ծրագիրը՝ համաձայն Հավելված 2-ի:

Ռեկտոր՝ **Ս. Առաքելյան**